



## ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

### 7-րդ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ ՎՈԼԵՅԲՈՒԼԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ

#### 1. ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ

- .Խաղերը կանցկացվեն 2019 թվականի օգոստոսի 06-17-ը:  
 1. Երևանի` <<ՀՖԿՍՊԻԻ>> և <<ՀՊՏՀ>> մարզադահլիճներում  
 2. Ստեփանակերտի` թիվ 6 դպրոցում :  
 Հետևյալ ժամանակացույցով`  
 04 օգոստոսի` մարզադահլիճների փորձարկում` Ստեփանակերտի ենթախումբ:  
 05-07 Օգոստոսի նախնական հանդիպումներ` Ստեփանակերտի ենթախումբում:  
 05 Օգոստոսի` մարզադահլիճների փորձարկում` Երևանի մարզադահլիճներում  
 06-07 Օգոստոսի նախնական հանդիպումներ ենթախումբերում` Երևանում:  
 08 Օգոստոսի հանգստյան օր  
 09-17 Օգոստոսի եզրափակիչ խաղեր 1-8 տեղերի և 9-16 տեղերի համար:

#### 2. ԹԻՄԵՐԻ ԿԱԶՄԸ

.Թիմի կազմը` 15 մարդ, 12 մասնակից և 3 պատասխանատու անձ:

#### 3. ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Վոլեյբոլի մրցաշարը կանցկացվի համաձայն վոլեյբոլի միջազգային ֆեդերացիայի (FIVB) կողմից գործող կանոնների:  
 Ցանկացած քանակի թիմերի մասնակցության դեպքում , 6-րդ Համահայկական խաղերում 1-4 տեղեր գրաված կանանց և տղամարդկանց թիմերը կրաժանվեն ըստ նախորդ խաղերում գրաված տեղերի իրենց համապատասխան ենթախումբերում, մյուս թիմերի տեղաբաշխումը ենթախումբերում կլինի խառը վիճակահանության միջոցով:  
 Ընդհանուր վիճակահանության այն ենթախումբերը, որտեղ տեղ կգրավի Ստեփանակերտ քաղաքի թիմերը/կանանց և տղամարդկանց/, այդ ենթախմբի խաղերը կանցկացվեն Ստեփանակերտ քաղաքում:

Ենթախմբերում խաղերը կանցկացվեն շրջանաձև համակարգով:

Կախված ենթախմբերի քանակից նրանցում 1-ին և 2-րդ տեղեր գրաված թիմերը իրենց մրցելույթները կշարունակեն 1-8 տեղերը որոշելու համար, որտեղ կգործի օլիմպիական համակարգը՝ հաղթող թիմերը իրենց մրցելույթները կշարունակեն 1-4 տեղերը որոշելու համար, իսկ պարտվող թիմերը կվիճարկեն 5-8 տեղերը:

1-4 տեղերը վիճարկելու ժամանակ պարտվող թիմերը կպայքարեն 3-4 տեղերի համար, իսկ հաղթող թիմերը 1-2 տեղերը որոշելու համար: Նույն համակարգը կգործի 5-8 և 9-16 տեղերը որոշելու ժամանակ:

Ենթախմբեր հանդիպումներից հետո կգործի խաղային հետևյալ համակարգը՝

. 1-ին ենթախմբում 1-ին տեղ գրաված թիմը կհանդիպի 4-րդ ենթախմբի 2 տեղ գրաված թիմի

հետ:

. 1-ին ենթախմբում 2-ին տեղ գրաված թիմը կհանդիպի 4-րդ ենթախմբի 1 տեղ գրաված թիմի

հետ:

. 2-րդ ենթախմբում 1-ին տեղ գրաված թիմը կհանդիպի 3-րդ ենթախմբի 2 տեղ գրաված թիմի

հետ:

. 2-րդ ենթախմբում 2-րդ տեղ գրաված թիմը կհանդիպի 3-րդ ենթախմբի 1 տեղ գրաված թիմի

հետ:

Ենթախմբերում 3-րդ և 4-րդ տեղեր գրաված թիմերը իրենց մրցելույթները կշարունակեն 9-16

տեղերը որոշելու համար,

նույն համակարգով՝

. 1-ին ենթախմբում 3-րդ տեղ գրաված թիմը կհանդիպի 4-րդ ենթախմբի 4-րդ տեղ գրաված

թիմի հետ:

. 1-ին ենթախմբում 4-ին տեղ գրաված թիմը կհանդիպի 4-րդ ենթախմբի 3-րդ տեղ գրաված

թիմի հետ:

2-րդ ենթախմբում 3-րդ տեղ գրաված թիմը կհանդիպի 3-րդ ենթախմբի 4-րդ տեղ գրաված

թիմի հետ:

. 2-րդ ենթախմբում 4-րդ տեղ գրաված թիմը կհանդիպի 3-րդ ենթախմբի 3-րդ տեղ գրաված

թիմի հետ:

. Ենթախմբերում թիմերի գրաված տեղերը որոշվում է վաստակած միավորների առավելագույն գումարով:

. Բոլոր խաղերը անցկացվում են հինգ խաղափուլերից:

. Հանդիպմանը չներկայանալու դեպքում թիմին գրանցվում է պարտություն 0:3 հաշվով, խաղափուլերում 0:25, 0:25, 0:25 հաշվով, իսկ նրա մրցակցին շնորհվում է հաղթանակ

3:0 հաշվով, 25:0, 25:0, 25:0 հաշվով:

. աԵրկու թիմերի միավորների հավասարության դեպքում հաշվարկ կատարելիս առավելություն տրվում է այդ թիմերի միջև կայացած հանդիպման հաղթողին:

բ/ Այդ թիմերի միջև կայացած հանդիպումներում խաղավույների լավագույն հարաբերություն ունեցող թիմին

գ/ բոլոր հանդիպումների խաղավույներում գնդակների լավագույն հարաբերություն ունեցող

թիմին:

. Երբ ա.բ.գ. կետերի արդյունքները հավասար են, ապա նույն հերթականությամբ հաշվարկվում են նրանց արդյունքները մյուս մասնակիցների հետ կայացած հանդիպումներում:

. Երեք և ավելի թիմերի միավորների հավասարության դեպքում առավելության հաշվարկը

թիմերի միջև կատարվում է նույն հերթականությամբ, ինչ 2 թիմերի ժամանակ է: Ենթախմբերում թիմերի միավորների տրաման համակարգը հետևյալն է՝

3:0, 3:1 հաղթանակի դեպքում՝ հաղթող թիմին տրվում է՝ 3 միավոր

0:3, 1:3 պարտվելու դեպքում՝ պարտվող թիմին տրվում է՝ 0 միավոր

3:2 հաղթանակի դեպքում՝ հաղթող թիմին տրվում է՝ 2 միավոր

2:3 պարտվելու դեպքում՝ պարտվող թիմին տրվում է՝ 1 միավոր

. Առաջնությունը անցկացվում է ՄԻԿԱՍԱ ՄՎԱ-200/MIKASA MVA 200/ գնդակով: Ծանոթություն՝

Թիմերի քանակի փոփոխության դեպքում Հայաստանի վոլեյբոլի ֆեդերացիային իրավունք է տրվում կատարել փոփոխություն խաղերի անցկացման կանոնակարգի մեջ:

ԳԼԽԱՎՈՐ ՄՐՑԱՎԱՐ՝



Գ.ԱՄՄԱՐՅԱՆ